ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

Ամենադժվար
պահին ես
քեզ հետ եմ

ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Դ ՑՈՒՑՈՒՄՆԵՐՈՒՄ ԿԱ, ԵՎ ՊԱՀՊԱՆՎԱԾ Է ԻՐԱՎԱԿԱՆՈՎ

ՀԵՂԻՆԱԿ
ՄԱՍՏԱԼԳՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ԱՐՑԱԿԱՐԳ ԱԼԻՔ
EMERGENCY CHANNEL

ԴԻՄԱԿԱՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇ
ԱՐՏԱԿԱՐԳ ԳՐԱԴԱՐԱՆ

Բարեւ, տավուշեցի իմ լավ բարեկամ:

Քեզ արդեն ասել են, չէ՞, որ դու մեծ ես, ժամանակն է, որ շատ բան ինքդ անես: Մինչ երեկ հայրդ կամ մայրդ ձեռքդ բռնած էին քեզ ման տալիս, տանում դպրոց, զբոսանքի, սպորտի կամ երաժշտության: Հիմա ժամանակն է, որ դու արդեն մենակ գնաս, մենակ փողոցն անցնես, ինքդ որոշումներ կայացնես ու ըստ այդ որոշումների էլ շարժվես: Գիտե՞ս, որ դա բոլորովին էլ հեշտ գործ չէ:

Հենց թեկուզ էդ փողոց անցնելը: Գիտե՞ս, թե աշխարհում օրական քանի մարդ է ընկնում ավտոյի տակ. չէ, դա ես էլ չգիտեմ, բայց հաստատ՝ շատ: Մի ուրիշ բան էլ հաստատ գիտեմ. մեքենայի տակ ընկնում են, որովհետեւ անզգույշ են լինում, չեն գիտակցում վտանգը, անտեսում են երթեւեկության կանոնները: Ու խոսքը միայն մեքենայի տակ ընկնելու մասին չէ: Ախր մեր կյանքում այնքան վտանգներ կան, որ միայն թվարկելը շատ երկար ժամանակ կխլի:

Եվ ուրեմն, որոշված է. այսօրվանից շատ ու շատ բաներ դու ինքդ պիտի անես, ինքդ որոշումներ կայացնես: Ու որպեսզի որոշումներդ լինեն ճիշտ ու սխալվելուդ հավանականությունը՝ ցածր, արի զրուցենք: Զրուցենք վտանգների ու դրանց հետեւանքների մասին, քննարկենք հերթով բոլոր վտանգներն ու հասկանանք, թե ինչ է պետք անել դրանցից խուսափելու համար:

Սկսենք հենց փողոցից:

ՓՈՂՈՑՈՒՄ

Փողոցը բաղկացած է երկու մասից՝ մի մասով երթեւեկում են մեքենաները, մյուս մասով, որ կոչվում է մայթ՝ մարդիկ են քայլում: Քանի դեռ մայթին ես՝ քեզ մեքենաներից վտանգ չի սպառնում: Բայց հո չե՞ս կարող անվերջ մայթով գնալ, մեկ-մեկ էլ պետք է փողոցն անցնել:

Փողոցում մարդիկ բաժանվում են երկու խմբի՝ վարորդներ (նրանք, ովքեր մեքենա են քշում) եւ հետիոտներ (նրանք, ովքեր ոտքով փողոցն են անցնում): Դու հիմա հետիոտն ես: Երբ մեծանաս, անձնագիր ունենաս, գնաս վարորդական դասընթացների ու նաեւ վարորդական իրավունք ունենաս՝ դու էլ կարող ես վարորդ դառնալ: Այնպես որ, վարորդներն էլ քեզ պես մարդիկ են, տարիքն առած, հասուն մարդիկ, բայց միշտ հիշիր, որ նրանք էլ կարող են սխալվել:

Հիմա լսիր ինձ, իմ հետիոտն բարեկամ: Քեզ, իհարկե, արդեն սովորեցրել են, թե ինչ է լուսացույցը: Դա երեք գույնի լույսեր ունեցող սարք է, որ տեղադրում են խաչմերուկներում: Քեզ համար, սակայն, կա երկու գույն՝ կարմիր ու կանաչ: Քեզ հաստատ արդեն ասել են նաեւ, որ կարմիր լույսի դեպքում պետք է սպասես եւ միայն կանաչ լույսը վառվելիս անցնես փողոցը: Ճիշտ են ասել: Բայց արի մի հավելում էլ կատարենք. «Մի՛ նայիր լուսացույցին, նայի՛ր մեքենաներին: Դեռ ոչ մի հետիոտն չի ընկել լուսացույցի տակ», - կատակում են փորձագետները: Այո, փողոցն անցնելիս պետք է ուշադիր հետեւել ոչ միայն լուսացույցին, այլեւ ընթացող մեքենաներին, քանի որ կարող են լինել կարգազանց կամ անուշադիր վարորդներ, ովքեր անտեսում են երթեւեկության կանոնները: Օրինակ, նրանք կարող են մեքենան չկանգնեցնել կարմիր լույսի տակ: Վրաերթի ենթարկվելուց հետո էլ ի՞նչ կապ ունի, թե ով է հարգել կանոնները:

Համոզված եմ, որ քեզ սովորեցրել են, ու դու արդեն գիտես, որ փողոցը պետք է անցնել միայն հատուկ նշագծված տեղերով, որ զոլավոր լինելու պատճառով մարդիկ կոչում են «զեբր», իսկ եթե գետնանցում կա՝ միայն ու միայն գետնանցումով:

Չալարե՛ս, ու միշտ հիշի՛ր՝ քայլելն օգտակար է:



ՄԱՐԴԱՏԱՐ ՄԵՔԵՆԱ ՆՍՏԵԼԻՍ

Ո՞վ չի սիրում մեքենայով ճամփորդել, մի տեղ գնալ, այն էլ՝ քո տարիքում: Մեր օրերում նույնիսկ անհնար է պատկերացնել, թե մարդիկ ոնց են առաջներում ապրել առանց մեքենաների:

Հիմա մի բան ասեմ՝ չես հավատա. ավտոճանապարհներին ավելի շատ մարդ է կորցնում իր առողջությունն ու կյանքը, քան տրանսպորտի մյուս բոլոր տեսակների վթարներից՝ միասին վերցված: Բա՛: Դե, ուրեմն, պետք է մեքենայում գտնվելիս էլ պահպանել զգուշություն:

Ասեմ՝ հիշիր. եթե պատրաստվում ես մեքենա նստել, քեզ մի գցիր առջեւի նստատեղին: Դեռ չեմ ասում, որ դրա համար ճանապարհային ոստիկանները վարորդին կտուգանեն: Այո՛, ըստ ճանապարհային երթեւեկության կանոնների՝ **մինչեւ 12 տարեկան երեխաներին չի թույլատրվում նստել առջեւի նստատեղին**, քանի որ այն ամենավտանգավորն է: Պայմանավորվեցի՞նք. նստում ես հետեւի նստատեղին: Հիմա կհարցնես՝ ա՞ջ, թե՞ ձախ կողմում: Հեռուստացույց նայելիս ուշադրություն դարձրու, թե ինչպես են երթեւեկում նախագահներն ու թագավորները, որ կողմից են թիկնապահները նրանց համար բացում դուռը. իհարկե՝ աջից:

Քանի դեռ քեզ նախագահի կամ թագավորի տեղ ես դրել, նաեւ հիշեցնեմ, որ մեքենայում կան **անվտանգության ամրագոտիներ:** Չես պատկերացնի, թե սրանք ինչպես կարող են փրկել մարդու կյանքը՝ մեքենայի ճակատային բախման կամ շրջվելու դեպքում: Փորձի՛ր, դժվար բան չէ ամրագոտին գցելը, բայց հո գիտե՞ս, որ պատահարի դեպքում գրեթե անվնաս կմնաս:

Եթե մեքենան ընթանում է 50 կմ/ժ արագությամբ եւ բախվում անշարժ արգելքի, անվտանգության գոտին չկապած ուղեւորի համար դա հավասարազոր կլինի չորրորդ հարկից ցատկելուն:

Մի քանի խորհուրդ էլ տամ այն դեպքերի համար, երբ ամրագոտի չկա:

Եթե երթեւեկում ես մեքենայով, եւ առաջացել է վթարային իրավիճակ, ապա գլուխդ անմիջապես ծածկիր ձեռքերով եւ կողքի վրա պառկիր նստատեղին:

Վթարային իրավիճակում երբեք դուրս չցատկես ընթացող ավտոմեքենայից:

Հիշի՛ր. մեքենայի մեջ մնալու դեպքում կենդանի մնալու հավանականությունը 10 անգամ ավելին է, քան ցատկելիս:

Վթարից հետո պետք է պարզել՝ հրդեհ կա՞, թե ոչ, եւ անմիջապես դուրս գալ ավտոմեքենայից: Եթե դուռը չի բացվում, պետք է բացել կամ կոտրել ապակիները եւ դուրս գալ:

Հիշի՛ր. հրդեհի դեպքում մեքենայի սրահում մեկ րոպեն էլ բավական է, որ ծխախեղդ լինես:

Եթե մեքենան ընկնում է ջուրը (գետ, լիճ, ջրամբար), այն որոշ ժամանակ մնում է ջրի երեսին, եւ կարելի է այդ ընթացքում դուրս գալ, ընդ որում ոչ թե մեքենայի դուռը բացելով (այդ դեպքում ջուրը միանգամից կլցվի մեքենայի մեջ եւ մեքենան կսուզվի), այլ պատուհանով:

Եթե մեքենան սուզվել է ջրի տակ եւ պատուհանները փակ են, ապա չպետք է խուճապի մատնվել, քանի որ մեքենայի սրահի օդը դեռ կհերիքի մի քանի րոպե:

Պետք է.

- **միացնել մեքենայի լույսերը, որպեսզի մեքենան հեշտ հայտնաբերեն.**
- **քիչ բացել պատուհանը (կամ կոտրել) եւ թողնել, որ մեքենայի կեսը լցվի ջրով: Այլապես, եթե անմիջապես բացեք դուռը կամ պատուհանը եւ փորձեք դուրս գալ՝ ջրի հոսքը ձեզ թույլ չի տա.**
- **մի քանի անգամ խոր շունչ քաշելով՝ պետք է ձեռքերով բռնել մեքենայի տանիքից եւ կտրուկ շարժումով դուրս լողալ վեր:**

Հիշի՛ր. մեքենայից դուրս գալով դեռեւս ունեք 30-40 վայրկյան, որը ջրից դուրս գալու համար բավարար ժամանակ է:

Անվտանգ երթեւեկելու մի ոսկե կանոն էլ կա, որ պետք է հիշես. երբեք չքնե՛ս երթեւեկելու ընթացքում:

Դու արդեն գրկի երեխա չես, ում համար շարժվող տրանսպորտը ոնց որ օրորոց լինի: Իսկ դու, որքան էլ քունդ տանի, պետք է դիմանաս: Ախր, եթե վարորդը կտրուկ արգելակի, կարող ես ցավոտ հարված ստանալ:

Այս կանոնը հիշիր եւ մարդատար մեքենա, եւ հասարակական տրանսպորտ նստելիս:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ

Հասարակական տրանսպորտ են՝ ավտոբուսը, տրոլեյբուսը եւ երթուղային տաքսին: Սա գիտեմ, որ գիտես: Բայց նաեւ պետք է իմանաս՝ ինչպես անվտանգ օգտվել տրանսպորտից: Չէ՞ որ արդեն ժամանակն է, որ մենակ, կամ ընկերներիդ հետ օգտվես հասարակական տրանսպորտի ծառայություններից:

Հասարակական տրանսպորտում վտանգավոր իրավիճակներ ստեղծվում են ոչ միայն երթեւեկելիս, այլեւ բարձրանալիս, իջնելիս, մեքենան կտրուկ արգելակելիս, ինչպես նաեւ հրդեհ բռնկելիս:

Սկսենք հենց սկզբից, կանգառում սպասելուց: Նախ. կանգնի՛ր միայն մայթին: Հետո, եթե կանգառում շատ մարդ կա, մի կանգնիր առաջին շարքում. պատահաբար կարող են քեզ հրել եւ գցել ընթացող մեքենայի անիվների տակ: Իսկ ձմռանը կարող ես սայթաքել:

Պետք է իջնել եւ բարձրանալ միայն, երբ տրանսպորտը կանգնած է:

Երթեւեկելիս մի՛ հենվիր դռներին ու մի՛ կանգնիր տրանսպորտի աստիճաններին:

Կարող ես ընկնել, բացի այդ, կխանգարես մյուսների բարձրանալուն եւ իջնելուն:

Բռնվիր միայն դրա համար նախատեսված բռնակներից: Ընկերոջդ ուսը, ինչ-որ մեկի բաճկոնը, առաստաղի լամպը, պատուհանի ապակին կամ դռները բոլորովին էլ հարմար բռնակ չեն:

Գլուխդ կամ ձեռքերդ բաց պատուհանից դուրս չհանես (կարող ես մնալ առանց աչքի կամ ձեռքի):

Եթե ընկերներով եք՝ տրանսպորտում չաղմկեք, խառնաշփոթ չառաջացնեք, բարձրաձայն չխոսեք, թե չէ կշեղեք ե՛ւ ձեր, ե՛ւ վարորդի ուշադրությունը:

Իսկ եթե հանկարծ հասկացել ես, որ վթարն անխուսափելի է, ընդունիր հնարավորինս ամուր դիրք: Օրինակ, եթե նստած ես, կռացիր առաջ եւ ձեռքերդ խաչաձեւ դնելով՝ բռնիր դիմացի նստատեղից: Գլուխդ սեղմիր ձեռքերիդ: Ոտքերդ երկարացրու, բայց չխցկես դիմացի նստարանի տակ, քանի որ նստարանը կարող է կոտրվել եւ ճզմել ոտքերդ: Ընդհանրապես, աշխատիր ոչ ինքդ խուճապի մատնվես, ոչ էլ շրջապատին խուճապի մեջ գցես, չգոռաս, չշփոթվես, մտքովդ անգամ չանցկացնես, թե վիճակն անելանելի է:

Չկա այնպիսի մի արտակարգ իրավիճակ, որից դուրս գալու ելքը չգտնվի: Եթե նույնիսկ պահն ամենադժվարինն է, անելանելին կամ անհուսալին՝ մի՛ վհատվեք:

ՀԻՄԱ ԱՐԻ ԳՆԱՆՔ ՏՈՒՆ

Ի՞նչը կարող է տանը վտանգավոր լինել... Որքան էլ տարօրինակ թվա՝ հատկապես տանն է պատահում դժբախտ դեպքերի մեծ մասը: Հենց բնակարաններում են մեզ դարանակալում տարբեր «թակարդներ», որոնց աշխարհում ամեն օր զոհ են դառնում տասնյակ հազարավոր մարդիկ: Աշխատիր չլինել նրանցից մեկը:

Գիտատեխնիկական առաջընթացն էապես փոխեց եւ հեշտացրեց մեր կենցաղավարումը, բարելավեց կյանքի պայմանները: Բայց այդ նույն «գիտատեխնիկական առաջընթացը» նաեւ պահանջում է, որ սովորենք ու իմանանք նոր տեխնիկայի եւ կենցաղային սարքերի կիրառման անվտանգության կանոնները եւ խստորեն պահպանենք դրանք: Այլապես գիտատեխնիկական առաջընթացը պատուհաս կդառնա մեր գլխին: Որ այդպես չլինի՝ քննարկենք տանը մեզ դարանած հնարավոր վտանգների պատճառները եւ տարբեր իրավիճակներում դրանց կանխարգելման միջոցները:

Ախր, պատճառները սովորական են՝ անզգուշություն, ցրվածություն, կենցաղային տեխնիկայի նկատմամբ թեթեւամիտ վերաբերմունք: Կան մարդիկ, որ դաս չեն քաղում նույնիսկ սեփական սխալներից:

Տանը կենցաղային պատահարների մեծ մասն առաջանում է.

- **պատահաբար վայր ընկնելուց.**
- **էլեկտրական հոսանքով էլեկտրահարվելուց.**
- **գազից եւ այլ նյութերից թունավորվելուց.**
- **խոհանոցային կտրող առարկաների հետ անզգույշ վարվելուց.**
- **նաեւ տանը եղած զենքի հետ անզգույշ վարվելուց:**

Հիմա խոսենք տանը դարանած վտանգների մասին առանձին-առանձին:

Վտանգ 1. Սուր կտրող-ծակող առարկաներ

Խոհանոցում օգտագործվում են դանակներ, պատառաքաղներ, մսաղացներ, այլ սուր կտրող-ծակող առարկաներ, որոնք փոքրիկ անզգուշության դեպքում տեղով վտանգ են: Ո՞վ գոնե մեկ անգամ դանակով չի կտրել ձեռքը: Եվ որպեսզի ձեռուոտ կտրտելը սովորույթ չդառնա՝ պետք է հիշել ու պահպանել մի քանի պարզ կանոն.

- **չի կարելի խաղալ սուր կտրող-ծակող առարկաներով, քանի որ դրանք կարող են վնասվածքի պատճառ դառնալ.**
- **նման բոլոր առարկաները (դանակ, մկրատ, ասեղ, քորոց, պատառաքաղ, կոճգամ եւ այլն) պետք է գտնվեն իրենց տեղում.**
- **եթե գտել եք սուր կտրող-ծակող առարկաներ, պետք է դրանք հանձնել մեծահասակներին կամ դնել մի ապահով, անվտանգ տեղ:**

Տան կարգուկանոնը ոչ միայն գեղեցկության եւ մաքրության համար է, այլեւ՝ անվտանգության.

- **երբ հաց, երշիկ կամ այլ մթերք եք կտրատում՝ ուշադրությունը մի՛ շեղեք այլ բաների վրա.**
- **մի՛ փորձեք կտրատել սառեցրած մթերք, սպասեք մինչեւ այն հալվի:**
- **ապակյա սպասքի, դարակների, հայելիների հետ գործ ունենալիս հիշեք, որ դրանք փխրուն են ու հեշտ կոտրվող: Ապակուց ստացած վերքերն ավելի ցավոտ են եւ ուշ են լավանում.**

Իսկ եթե, այնուամենայնիվ, վնասել եք ձեզ՝ **ոչ մի դեպքում վերքին չդիպչեք կեղտոտ ձեռքերով: Վերքի չորսբոլորը մշակեք յոդով եւ վիրակապեք:**

Վտանգ 2. էլեկտրասարքեր

Էլեկտրականությունը մեր կենցաղ է մտել 19-րդ դարի վերջում: Մինչ այդ փողոցները լուսավորվում էին նավթի ճրագներով, բնակարանները՝ յուղի ճրագներով կամ մոմերով: Մարդուն վաղուց չի զարմացնում «էլեկտրականություն» բառը: Աչքներս բացել ու տեսել ենք՝ հեռուստացույց, սառնարան, լվացքի մեքենա, արդուկ, լուսամփոփ: Այսօր էլեկտրաէներգիան մեր կենցաղում ամենահավատարիմ օգնականն է, ու դժվար է պատկերացնել կյանքն առանց էլեկտրականության:

Բնակարաններում կան բազմաթիվ էլեկտրասարքեր: Առավոտից երեկո մեր հաշվիչը պտտվում է, քանի որ վառել ենք լույսը, միացրել հեռուստացույցը, էլեկտրասալիկների վրա ճաշ ենք եփում, աշխատում ենք համակարգիչով եւ այլն: Բայց դրանք կարող են նաեւ առողջությանը մեծ վնաս հասցնել, եթե չպահպանենք անվտանգության տարրական կանոնները:

Բոլոր էլեկտրասարքերը վտանգավոր են ոչ միայն էլեկտրահարելու իրենց կարողությամբ, այլեւ անփութությունը պատժելու եւ տանը հրդեհ առաջացնելու խստությամբ:

Էլեկտրահարումը կամ, ինչպես ասում են, հոսանքահարումն առաջանում է, երբ նույնիսկ մեկ ակնթարթ դիպչում ես բաց հաղորդալարին կամ անսարք վարդակին:

Այդ պատճառով երեխաները պետք է իմանան էլեկտրական սարքավորումներից օգտվելու անվտանգության կանոնները.

- օգտվիր միայն այն էլեկտրասարքավորումներից, որոնցից թույլ են տվել օգտվելու ծնողներդ.
- միշտ պահպանիր էլեկտրասարքավորումները ցանցին միացնելու կարգը: Լարը սկզբում պետք է միացնել սարքին, այնուհետեւ՝ ցանցին: Իսկ անջատելիս՝ հակառակը, սկզբում անջատել ցանցից, հետո՝ սարքից.
- մի՛ փորձիր ինքնուրույն նորոգել անսարք էլեկտրասար-քավորումը, առավել եւս, եթե այն անջատված չէ հոսանքից.
- չի՛ կարելի մոտենալ կամ ձեռք տալ բաց էլեկտրալարերին:

Եթե էլեկտրասարքավորումը հանկարծակի սկսում է այրվել, ապա.

- հանիր էլեկտրալարը վարդակից, նախապես ձեռքը փաթաթելով չոր շորի կտորով.
- սարքավորումը ծածկիր չոր ծածկոցով կամ այլ շորով.
- եթե այրումը շարունակվում է, անհապաղ ահազանգիր փրկարարական ծառայություն 911 հեռախոսահամարով:

Չի կարելի այրվող էլեկտրասարքավորումը մարել ջրով, քանի դեռ այն անջատված չէ հոսանքի ցանցից, այլապես անմիջապես կհոսանքահարվես: Ջուրը կարող է նաեւ կարճ միացում առաջացնել ու հրդեհի պատճառ դառնալ:

Ճիշտ է, ֆիլմերում տեսած կլինեք, որ հրդեհը ջրով են մարում, բայց հիշիր, որ ջրով կարող ես մարել այրվող վարագույրը, փայտը, բայց ոչ էլեկտրասարքավորումը:

էլեկտրականության եւ ջրի հարեւանությունը շատ վտանգավոր է, այդ պատճառով

չի՛ կարելի դիպչել էլեկտրասարքավորումների հաղորդա-լարերին թաց ձեռքերով:







- Խոնավ շորով երբեք չսրբես միացված հեռուստացույցի էկրանը:
- Ծաղկամանները մի՛ կախիր հեռուստացույցի, ձայնագրիչի, վարդակների վերեւում, քանի որ դրանցից կաթող ջուրը կարող է եւ՛ հրդեհի, եւ՛ հոսանքահարման պատճառ դառնալ:
- Չի կարելի մեկ վարդակից միացնել բազմաթիվ էլեկտրասարքեր:
- Տնից, նույնիսկ սենյակից դուրս գալիս սովորույթ դարձրու անպայման անջատել բոլոր սարքերը (հեռուստացույց, ձայնագրիչ, էլեկտրասալիկ եւ այլն):
- Մի՛ օգտագործիր էլեկտրական արդուկ, թեյաման, սալօջախ, զոդիչ (պայալնիկ)՝ առանց հատուկ հրակայուն տակդիրի :
- Վտանգավոր է օգտագործել վնասված մեկուսիչ լարով էլեկտրասարք:
- Ձեռքդ չմտցնես ջրի մեջ, եթե այն տաքանում է էլեկտրատաքացուցիչով, ինչպես տանն ենք ասում՝ (կիպիտիլնիկով):
- Քիչ չեն դեպքերը, երբ երեխաներն, անտեսելով նախազգուշական բոլոր նորմերը, հետաքրքրությունից դրդված ձեռքը մտցնում են էլեկտրական հաշվիչների, ապահովիչների խցիկը եւ էլեկտրահարվում: Այդպես մի՛ վարվիր:
- Լոգարանում վաննայի ջուրը չի կարելի տաքացնել էլեկտրատաքացուցիչով:
- Լողասենյակում միացրած մի՛ թող կենցաղային էլեկտրասարքը, քանի որ այնտեղ առաջանում են ջրային հոսանքահաղորդ գոլորշիներ:
- Վարդակից խրիչը հանելիս երբեք լարից մի՛ ձգիր: Այն կարող է կտրվել՝ մերկացնելով լարվածության տակ գտնվող հաղորդիչները:
- Էլեկտրասարքերի խրիչները երբեք մի նորոգիր մեկուսիչ ժապավեններով, եթե դրանք կոտրվել են, ավելի լավ է նորը դնել:
- Արդուկը մի՛ վերցրու թաց ձեռքերով եւ մի՛ արդուկիր՝ հատակին ոտաբոբիկ կանգնած:
- Արդուկի մեջ ջուր լցնելուց առաջ անպայման արդուկը անջատիր հոսանքից:
- Տաք արդուկի շուրջը մի՛ փաթաթիր լարը, որովհետեւ այն կարող է էլեկտրալարի մեկուսիչ մասերը վնասել եւ այրվելով՝ հրդեհ առաջացնել:

Արգելվում է.

- օգտագործել անսարք եւ ինքնաշեն էլեկտրասարքավորումներ ու գազի սարքեր.
- էլեկտրական լամպերը փաթաթել թղթով կամ շորով:

Հիշի՛ր. հոսանքահարվելիս անհրաժեշտ է անմիջապես անջատել հոսանքի աղբյուրը: Մի՛ դիպիր հոսանքահարված մարդուն, քանի դեռ հոսանքը չես անջատել: Կիրառելով հոսանքամեկուսիչ առարկաներ՝ հոսանքահարվածին հեռացրու հոսանքի աղբյուրից: Եթե տուժածի գիտակցությունը տեղն է, թող պառկած, ոտքերը բարձրացրու 30 սմ, կամ շրջիր կողքի՝ բարձրացրած գլխով եւ սրունքներով, ծածկոցով ծածկիր եւ բժիշկ կանչիր:

Վտանգ 3. Ջրմուղ

Առաջին անգամ ջրմուղ կառուցել են հռոմեացիները 2000 տարի առաջ եւ անվանել են «ակվեդուկտ»: Այն ջուր էր «բերում» աղբյուրներից դեպի քաղաք:

Ներկայումս մենք բնակարանում օգտագործում ենք ինչպես սառը, այնպես էլ, հնարավորության դեպքում, տաք ջուր: Ջուրը մեր բնակարան է հասնում ջրմուղ ցանցից՝ հատուկ պոմպերի միջոցով: Պոմպերը ստեղծում են մեծ ճնշում, որպեսզի ջուրը հասնի ամենաբարձր հարկերը: Բնակարանի ներսում ներքին ջրմուղ ցանցի միջոցով ջուրը հասնում է խոհանոց, լոգարան, զուգարան:

Օգտագործված ջուրը բնակարանից հեռացվում է կոյուղու միջոցով, որն իրենից ներկայացնում է խողովակների համակարգ:

Հիշի՛ր. ջրմուղ-կոյուղու համակարգը տանը պետք է լինի կարգին վիճակում, այլապես բնակարանը կարող է ողողվել ջրով:

Որո՞նք են բնակարանի՝ ջրով ողողվելու պատճառները.

- խողովակներում ժամանակի ընթացքում առաջացած ճաքերը.
- ջեռուցման մարտկոցներում առաջացած ճաքերը (այս դեպքում բնակարանը կլցվի տաք ջրով եւ գոլորշիով).
- խոհանոցի լվացարանի խցանումը.
- լոգարանի չափից ավելի ջրալցումը.
- կոյուղու խցանումը:



Ի՞նչ պետք է անել բնակարանի՝ ջրով ողողվելու դեպքում:

1. Վթարի մասին անհապաղ հայտնի՛ր ծնողներիդ կամ հարեւաններին:
2. Զանգահարի՛ր բնակշահագործման գրասենյակ:
3. Փակի՛ր բնակարան մուտք գործող ջրի ծորակները:
4. Անջատի՛ր էլեկտրականությունը: Չի կարելի օգտագործել էլեկտրասարքավորումներ:
5. Ջրի հոսքի տեղերում դիր դույլ, հոսքի տեղերը փաթաթիր կտորով եւ սկսիր հավաքել կուտակված ջուրը:

Ինչպե՞ս խուսափել բնակարանը ջրով ողողելուց:

1. Կոյուղու մեջ մի՛ գցիր տարբեր առարկաներ:
2. Մի՛ խցանիր խոհանոցի լվացարանը սննդամթերքի մնացորդներով:
3. Ջրից օգտվելուց հետո անմիջապես փակի՛ր ծորակը:
4. Իմացի՛ր բնակարան մուտք գործող ջրի ծորակների տեղը:

Վտանգ 4. Լվացքի մեքենա

Չի կարելի ինքնուրույն միացնել լվացքի մեքենան կամ միացրած ժամանակ ձեռքը մտցնել դրա մեջ: Ձեռքը կարող է վնասվել:

Երբեք մի՛ բացիր լվացքի մեքենայի դռնակը. կարող ես տաք ջրից այրվածքներ ստանալ:

Վտանգ 5. Դեղորայք եւ կենցաղային քիմիա

Ներկայումս քիմիական արդյունաբերությունն արտադրում է կենցաղային տարբեր միջոցներ. լվացքի, ամանեղեն լվանալու, ախտահանիչ եւ կեղտաբծեր մաքրող, հատակի եւ կահույքի, մեքենաների եւ մոտոցիկլետների խնամքի, միջատների եւ կրծողների դեմ պայքարի միջոցներ, քիմիկատներ, որոնցով բուժում են ծառերն ու բույսերը: Եթե այս բոլորը ճիշտ են օգտագործվում, ապա ամեն ինչ անվտանգ է: Բայց փոքրիկ անզգուշություն՝ եւ դրանք կարող են դառնալ շատ վտանգավոր:

Որո՞նք են դրանց անվտանգ օգտագործման հիմնական կանոնները:

Կենցաղային քիմիայի բոլոր միջոցները պետք է կիրառել միայն այնպես եւ այնպիսի նպատակների համար, ինչպես ցուցված է փաթեթավորման կամ տուփի պիտակի վրա:

☑ Չի՛ կարելի խաղալ տանը գտնվող դեղորայքի եւ կենցաղային քիմիայի (լվացքի փոշիներ, աման լվանալու, միջատասպան, ժավել եւ այլ միջոցներ) տուփերով ու տարաներով:

Եթե նույնիսկ հիվանդ ես, չի՛ կարելի ինքնուրույն դեղորայք ընդունել: Դա կարելի է անել միայն ծնողների իմացությամբ:

☑ Չի կարելի բացել աէրոզոլի բալոնները, դրանք կարող են պայթել կամ նյութի մնացորդը կարող է լցվել աչքերդ:

Նույնիսկ աէրոզոլային դատարկ բալոններով չի կարելի խաղալ: Աէրոզոլային բալոնները չի՛ կարելի պահել գազօջախի, էլեկտրական սալիկների, ջեռուցիչ սարքերի մոտ:

Հիշի՛ր. ծնողներին պետք է զգուշացնել, որ աէրոզոլային բալոններով աշխատելիս չի՛ կարելի ծխել:

☑ Չի՛ կարելի սննդամթերքը պահել կենցաղային քիմիական նյութ պարունակած շշերում կամ այլ տարաներում, որքան էլ դրանք լավ լվացված լինեն:

☑ Չի կարելի համտեսել տանը գտնվող դեղորայքը, եթե նույնիսկ տեսել ես, թե ինչպես են այն օգտագործում մեծահասակները:

Հիշի՛ր. մեծահասակներին պետք է զգուշացնել, որ տարաբնույթ նյութեր պարունակող յուրաքանչյուր տարա իր վրա պետք է ունենա լավ ընթեռնելի պիտակ:

☑ Չի կարելի բաց անել անհայտ նյութ պարունակող շշերը, հոտ քաշել, համտեսել կամ թափահարել, քանի որ նյութի նույնիսկ չնչին քանակությունը կարող է թունավորման պատճառ դառնալ կամ այրվածքներ առաջացնել:

Հիշի՛ր եւ մեծահասակներին հիշեցրո՛ւ. լվացող հեղուկները եւ թունավոր այլ նյութեր չի՛ կարելի պահել հյութերի, հանքային, սպիրտային խմիչքների դատարկված տարաներում (շշերում):

Մի՛ դիր դրանք խոհանոցի պահարաններում եւ այն դարակներին, որտեղ կա սնդամթերք. դրանց համար հատուկ տեղ առանձնացրու:

Ինչ՞ անել, երբ թունավորվել ես կենցաղային քիմիական որեւէ նյութով:

Ամենահասարակ եւ մատչելի ձեւը սովորական խմելու ջուրն է, որը գոլ վիճակում պետք է մեծ քանակությամբ խմեցնել, եւ այնուհետեւ մատով կամ գդալի պոչով լեզվի արմատը սեղմելով՝ փսխում առաջացնել: Դրանից հետո կարելի է ուտեցնել կարտոֆիլի պյուրե կամ հում ձվի սպիտակուց, անհապաղ բժիշկ կանչել:

Եթե տուժածը գիտակցությունը կորցրել է, նրան պետք է շրջել երեսնիվայր, գլուխը պետք է լինի ավելի ցածր, քան իրանի կոնքազդրային հատվածը: Շտապ բժիշկ կանչեք:

Վտանգ 6. Գազ

Տանը գազ ունենալն անհրաժեշտություն է, սակայն այն կարող է նաեւ վտանգավոր լինել, եթե արտահոսք կա:

Աներեւույթ ու անձայն լինելու պատճառով գազը կարող է աննկատ կուտակվել տանը եւ պայթել կամ թունավորման պատճառ դառնալ:

Տարբեր գազեր կարող են խեղդվելու, թունավորման եւ պայթյունի պատճառ դառնալ: Ամենանենգն անհոտ, անհամ եւ աչքերը չգրգռող **շմոլ գազն է**: Այն առաջանում է գազօջախի անսարքության պատճառով, իսկ Հայաստանում նման դեպքեր հաճախակի են լինում, հատկապես ձմռանը՝ վառարանների օգտագործման ժամանակ, երբ թերայրումից առաջանում է շմոլ գազ:

Գազից թունավորումների ժամանակ, չստիպելով տուժածին ինքնուրույն գնալ, անհրաժեշտ է նրան դուրս բերել լավ օդափոխված տեղանք: Արձակել նրա հագուստը (օձիք, փողկապ, գոտի) եւ փաթաթել ծածկոցով, որպեսզի չմրսի, որից հետո անհապաղ բժիշկ կանչել:

Հիշի՛ր. չի՛ կարելի գազից թունավորվածին տալ ալկոհոլային խմիչք:

Գազը, բացի թունավորում եւ պայթյուն առաջացնելը, կարող է նաեւ տանը հրդեհի պատճառ դառնալ: Ուստի, եթե գազի հոտ ես զգում, ապա չի կարելի լուցկի կամ կրակվառիչ վառել, միացնել լույսը կամ էլեկտրական այլ սարքավորում, օգտվել գազօջախից:

Գազի հոտ առնելիս անհրաժեշտ է.

- այդ մասին շտապ հայտնել մեծահասակներին.
- բացել բոլոր պատուհանները եւ օդափոխել սենյակը.
- ստուգել գազօջախի փականները, եթե բաց են, ապա փակել դրանք.
- անմիջապես զանգահարել **1-04**: Զանգահարել հարեւանի տնից, քանի որ եթե բնակարանը լցված է գազով, ապա ձեր **հեռախոսից օգտվելիս կարող է հեռախոսի ապարատում կայծ առաջանալ, եւ տեղի կունենա պայթյուն**:

Ինչի՞ վրա է հարկավոր ուշադրությունը դարձնել:

Հայաստանում, բացի գազի կենտրոնացված մատակարարումից, օգտագործվում են նաեւ գազի բալոններ: Շատ կարեւոր է իմանալ.

- գազի բալոնը պետք է գտնվի լավ օդափոխվող տարածքում.
- այն պետք է գլխիվայր կամ թեքված չլինի.
- բալոնները չի կարելի թաղել հողում կամ իջեցնել նկուղ, երկրի մակերեւույթից ցածր.
- չի՛ կարելի գազի բալոնը փոխել, եթե հարեւանությամբ կա էլեկտրական սարք, կամ կրակ է վառվում:

Հետաքրքիր է իմանալ.

Բալոնների գազն ունի դեպի ներքեւ տարածվելու ունակություն, քանի որ գազը երկուսուկես անգամ ծանր է օդից:

Ե՞րբ կարող է լինել գազի արտահոսք.

- երբ բաց պատուհանից փչող քամին մարում է գազօջախի կրակը, որի վրա ճաշ է եփվում.
- երբ թեյամանի ջուրը կամ կաթսայի ապուրը թափվում է, եւ մարում է կրակը.
- երբ ճաք է առաջանում գազի խողովակներում:



Չի կարելի օգտվել գազօջախից, եթե մենակ ես (առանց մեծահասակների) :

Եթե ուզում ես բացել խոհանոցի պատուհանը, ապա ուշադրություն դարձրու՝ չկա՞ արդյոք միջանցիկ քամի, քանի որ այն կարող է մարել գազօջախի կրակը, եւ գազը կտարածվի խոհանոցում:

Թեյամանը գազօջախին մի թող ու հեռանա: Եթե այն չափից ավելի լիքն է, ապա եռալով կարող է թափվել եւ մարել կրակը:

Մինչ գազօջախը վառելը ստուգիր՝ արդյո՞ք բոլոր փականներն են փակ:

Գազօջախի փականը պետք է բացել միայն այն ժամանակ, երբ լուցկին վառված է:

Եթե գազօջախը վառելիս լուցկին հանկարծակի հանգչում է, ապա պետք է փակել փականը եւ քիչ հետո կրկին փորձել այն վառել:

Երեխաները չպետք է կախվեն գազի խողովակներից եւ ճոճվեն:

Հիշի՛ր. եթե սենյակում գազի արտահոսք կա, նույնիսկ սառնարանի ինքնաշխատ միացումը կարող է բավական լինել, որ պայթյուն առաջանա:

Ամեն երեկո, քնելուց առաջ, պետք է անպայման փակել գազը:

Վտանգ 7. Պատշգամբ

Չի կարելի պատշգամբում շարժուն խաղեր խաղալ. կարող ես կորցնել հավասարակշռությունդ եւ վայր ընկնել:

Չի կարելի թեքվել (կախվել) պատշգամբի բազրիքից եւ ներքեւ նայել, եթե նույնիսկ շատ հետաքրքիր բան է կատարվում: Եթե անպայման ուզում ես հետաքրքրությունդ բավարարել՝ ավելի լավ է իջնես բակ:

Չի՛ կարելի անցնել պատշգամբի բազրիքի մյուս կողմը:

Վտանգ 8. Աստիճանների բազրիք (ճաղաշարք)

Չի կարելի սահելով իջնել աստիճանների բազրիքի (ճաղաշարքի) վրայով, եթե չես ուզում ձեռքերի, ոտքերի կամ գլխի կոտրվածքներ ստանալ:

Եղիր աշխույժ, խիզախ ու քաջ, բայց՝ ոչ անխելք

Վտանգ 9. Թափթփված բնակարան

Կարգուկանոն ամենուր է հարկավոր: Ինչքա՜ն ոտքեր են վնասվել հատակին ընկած դատարկ շշերի պատճառով, ինչքա՜ն կոտրվածքներ՝ խոհանոցի հատակին թափված եւ չմաքրած կարտոֆիլի, բանանի կամ այլ մթերքի կեղեւների ու մնացորդների հետեւանքով:

Ժամանակակից տներում լաքապատ հատակները, անկայուն աթոռներն ու աթոռակները, շարժական տնային աստիճանները, հատակի վրա սահող գորգերն ու կարպետները հաճախ են հանգեցնում դժբախտ պատահարների, իսկ հիմնական պատճառը անուշադրությունն է:

Որպեսզի խուսափեք դժբախտ պատահարներից պետք է.

- ուշադրություն դարձնել աթոռների, տնային աստիճանների, աթոռակների կայունությանը.
- հատակին չթողնել խաղալիքներ կամ այլ առարկաներ.
- միշտ նայել ոտքերի տակ, հատակին թափված կեղեւների ու մնացորդների (վարունգի, կարտոֆիլի, ձմերուկի, բանանի եւ այլն) պատճառով չսայթաքելու համար.
- անհապաղ սրբել հատակին թափված ցանկացած հեղուկ.
- հետեւել, որ բոլոր գորգերն ու կարպետները հատակին ամրացված լինեն մեխերով կամ կպչուն ժապավեններով.
- զգույշ լինել, երբ տնային շարժական աստիճաններով բարձրացել եք՝ լուսամփոփ կամ պատուհան մաքրելու, սարդոստայնները առաստաղից վերացնելու կամ բարձր դարակներից որեւէ իր վերցնելու.
- աստիճանով իջնելիս կամ բարձրանալիս ձեր դիմաց մի՛ պահեք մեծ փաթեթներ կամ արկղեր, որոնց պատճառով ձեր տեսադաշտը կփակվի, եւ դուք չեք տեսնի աստիճանը:

Մի խոսքով, զգուշությունն ու կարգուկանոնը տանը մեր անվտանգության հիմքն են:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Շատ կարևոր է, որ սահմանամերձ Տավուշի մարզի երեխաներն իմանան, թե **Ինչ է նշանակում քաղաքացիական պաշտպանությունը:**

Դա միջոցառումների մի համակարգ է որը պաշտպանում է բնակչությանն ու նյութական-մշակութային արժեքները պատերազմի կամ դրա սպառնալիքի ժամանակ:

Քաղաքացիական պաշտպանության կազմակերպումն ու իրականացումը պետության կարևորագույն գործառույթներից է և՝ ազգային անվտանգության բաղկացուցիչ ու անբաժանելի մասը:

Քաղաքացիական պաշտպանության հիմնական միջոցառումներից են.

- կառավարման մարմինների և բնակչության ազդարարումը.
- տարահանումը և տեղաբաշխումը.
- պատսպարումը.
- անհատական պաշտպանության միջոցներով բնակչության ապահովումը.

Ազդարարման ազդանշանները և դրանց հետ կապված միջոցառումները

Ազդարարման ազդանշանների տեսակներն են՝

«ՕԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊ»

«Օդային տագնապ» ազդանշանը տրվում է Հայաստանի Հանրապետության վրա օդային հարձակման դեպքում.

«Օդային տագնապ» ազդանշանի դեպքում էլեկտրաշչակների միջոցով տրվում է ընդհատվող (տատանվող) ձայնային ազդանշան (2-3 րոպե տևողությամբ), միաժամանակ բարձրախոսներով տրվում է «Օդային տագնապ: Պատսպարվել պաշտպանական կառույցներում» բովանդակությամբ համապատասխան տեքստային հաղորդագրություն:

«ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻՆ»

«Ուշադրություն բոլորին» ազդանշանը տրվում է արտակարգ իրավիճակի առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման և դրա անմիջական վտանգի առկայության, Հայաստանի Հանրապետության վրա օդային հարձակման ավարտի դեպքերում:

«ՈՒշադրություն բոլորին» ազդանշանի դեպքում էլեկտրաշչակների միջոցով տրվում է չընդհատվող ձայնային ազդանշան (2-3 րոպե տևողությամբ), միաժամանակ ազդարարման միջոցներով տրվում է «ՈՒշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին ……..» բովանդակությամբ համապատասխան տեքստային հաղորդագրություն (օրինակ՝ «ՈՒշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին: Ճառագայթային վտանգ է սպառնում հետևյալ բնակավայրերին…..», «ՈՒշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին: Աղետալի ջրածածկման վտանգ է սպառնում հետևյալ բնակավայրերին… տներին, … կազմակերպություններին …», «ՈՒշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին: Օդային տագնապի ավարտ: Դուրս գալ պաշտպանական կառույցներից … (կամ կատարել … գործողությունները)»):

Ազդարարման ազդանշանները տրվում են կապի և ազդարարման բոլոր միջոցներով՝ էլեկտրաշչակների և բարձրախոսային (ստացիոնար և շարժական) սարքերով, հեռուստատեսությամբ, ռադիոհեռարձակմամբ, հեռախոսակապով և համացանցային կապով:

Ինչ է քաղպաշտպանությունը, որոնք են ազդարարման ազդանշանները և դրանց հետ կապված միջոցառումները, ինչպես են տարհանում բնակչությանը վտանգավոր տարածքից, դպրոցների քաղպաշտպանական պլանները, Քաղաքացիական պաշտպանության համաշխարհային օրվա կարևոր խորհուրդն ու ուղերձը կարող եք դիտել այս տեսանյութում:

Դու արդեն շատ լավ գիտես, որ
ով իրազեկված է, նա պաշտպանված է:
Կարդա, սովորիր, ճանաչիր վտանգները, իմացիր ինչպես խուսափել, ինչպես պաշտպանվել դրանցից: Այդ վտանգներն ամենահեռավոր դարակում ընկած մոռացված իրի պես քեզնից հեռու կմնան, եթե իմանաս ու կիրառես անվտանգության կանոնները:
Աշխարհում ուրիշ շատ վտանգներ էլ կան. բնական՝ երկրաշարժ ու ջրհեղեղ, սողանք ու սելավ, փոթորիկ ու կայծակ, տեխնածին վթարներ կան, որոնք մարդու գործունեության հետեւանք են (դրանց կոչում են անտրոպոգեն, հունարեն՝ մարդածին), համաճարակներ կան ու էկոլոգիական աղետներ:

Այդ բոլորի ու դրանցից պաշտպանվելու վարքականոնների մասին Արտակարգ ալիքը կշարունակի քեզ պատմել: Ամենակարևորը՝ միասին պիտի ձևավորենք անվտանգության ու դիմակայունության մշակույթը:

Դիմակայուն Տավուշ կերտողները
Տարաբնույթ մարտահրավերները դիմակայելու պատրաստ, իրազեկ ու պաշտպանված, իր գործողությունները կառավարելու ընդունակ, կյանքը բարելավելու, առավել անվտանգ դարձնելու, կայուն զարգացում ապահովելու կարողունակ, նպատակասլաց, արժանապատիվ, բարյացակամ, առողջ, անխախուտ ազգային ու համամարդկային արժեհամակարգով, լավատես ու երջանիկ, կիրթ ու հավատավոր, պրոֆեսիոնալ ու հայրենասեր քաղաքացի:

Ով մեռած է՝ արթուն կացեք

911 ՀԻՇԵՔ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐԸ

ՏԱՎՈՒՇ MEDIA

Զեր բնակավայրին, Զեզ և Զեր ընտանիքին սպառնացող բոլոր վտանգների, դրանց հետևանքների ու նվազեցման վարքականոնների մասին կարող եք տեղեկանալ ՆԳՆ Տավուշի փրկարարական վարչությունից՝ Իջևան, Արցախյան 4, հեռ. 060726152 կամ էլ
Տավուշ Մեդիայի կայքի Դիմակայուն Տավուշ շտեմարանից՝ www.tavushmedia.am

Տպագրվում է
ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ՏԱՎՈՒՇ
ծրագրի շրջանակում:
ԱՄՔՈՐ ԱՐՄԵՆԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
աջակցությամբ:

UMCOR
Armenia Foundation